

ՄԱՅՐՍ ՓՐԿԵՑ ԶԻՍ ԵՓՐԱՏԵՆ

Շապին-Գարահիսարի հերոսամարտին շքեղ 26 օրերուն վրա սկ վարագույր իշնաւեն հետո, երբ բերդեն վար իշանք, մեզմե 500—600 հոգի, ամբողջությամբ կին, երեխաւու պատանի, քաղաքեն մեկ ժամ հեռու գտնվող լընաղ թամզարա գյուղը տանիլ տեղավորելու պատրվակով, թուրքերը մեզ ճամբարա հանեցին ու աքսորեցին: Մեր այն հարցումին, թե «Մեզ ո՞ւր կտանիք», ըսին՝ «Միշագետք»: Մեր մեջ շափահաս այրեր շկային, բոլորը նախօրոք սպանված էին: Եղայլու՝ Հայկազը և Անուշավան Խանճյանը, որոնք երկուքն ալ 17 տարեկան էին, իրեւ «գարթ կյավուր» վար դրին ու գնդակահարեցին: Որով, ես, հազիվ 15 տարեկան պատանի, մեր խումբին մեջ գտնվող մանչերուն ամենեն տարեցը մնացի: Շատեր կզարմանային, թե ինչպես կըլար, որ թուրքերը զիս ալ վար չէին դրեր, կամ՝ տեղնուտեղը գնդակահարել:

Թոնագաղթի առաջին օրը, վերը հիշած երկու պատանիներես զատ, սպանեցին նաև ծերունի կին մը, որովհետև չէր կրնար ճամբան շարունակել: Երկորդ օրը, ձորի մը մեջ մեր քարավանը կիսեցին ու վերջին մասը հանձնեցին հոն սպասող ջարդարաներու: Անոնց մե ոչ ոք ազատեցավ: Երրորդ օրը, հոգնած ու քաղցած, հասանք Աղվանիս: Աղվանիսը Աշխարհ Օվալի բերրի հայ գյուղերեն մեկն էր, մյուսիրանիստ: Իր հողե ցածիկ տուներուն մեզեն հպարտորեն գլուխը վեր կրարձրացներ հայոց եկեղեցին՝ իր զանգակատունով ու փեշին տակ ծվարած դպրոցով: Աբուրեր կամ ջարդեր էին բոլոր հայերը ու անոնց բնակարանները հիմա կգործածեին իրեւ օթևան ճակատ գացող կամ ճակատեն ետ դարձող զինվորներու: Կարոն ճակատը պաշեն կամ ուազմանյութ փոխադրող քարավաններն ալ այս գյուղին մեջ կանգ կառնեին: Ահա թե ինչու, երբ մենք հոն հասանք,

գյուղը լեցուն էր զինվորականներով: Ընդարձակ կալի մը մեջ ձգեցին մեզ, որ հանգչինք, շունչ առնենքի. Ոստիկանի մը ընկերակցությամբ մեզի այցելության եկալ 8—10 տարեկան տղեկ մը: Հագված էր պզտիկ պարոնի մը պես: Հսավ, որ ինք հայ էր, բայց հիմա իր անունը թեքիք է ու իր «նոր հայրիկը», որ գյուղին մյուտիրն է, զինքը շատ կսիրե:

— Մայրիկդ ալ հոս, քո՞վդ է, — հարցուցի:

— Զէ, մայրիկս գնաց, բայց նոր հայրիկս մարդ զրկեց իր ետևնեն, որ գտնե ու ետ բերե: Մայրս, որ ներկա էր այս խոսակցության, նշնչվեցավ:

— Եթե այս տղան կրցած է որդեգրվելով ազատվիլ, գուն ալ կրնաս, — ըսավ ուրախությամբ: — Արդեն կիալսա՝ ու պիտի չկրնաս շարունակել ճամբադ: Դուն աշբովդ տեսար, թե ի՞նչ կապատահի ետ մնացողներուն: Աս ալ կա որ, չեմ ուզեր քեզ աղքատի, գեղացիի տալ. ծանր աշխատանքի տակ կապաննեն ձեքեց... Զանա՛, այս պատիկին պես, էրկանակուա (հեղինակավոր) մեկը գտնել իրեւ տեր ու պաշտպան:

Զպատասիանեցի: Գլուխս կախած կուկայի և կմտածեի իր ըսածներուն մասին:

— Եթե այդ տղան կրցեր է մնալ, ուրեմն հայ տղաքը որդեգրելու արտոնություն կա, — եղանակցուց ան, — ուրեմն աշքդ բաց:


Նորեն շպատասիանեցի, գլուխս կախ կմտածեի: Կմտածեի, թե ինչպե՞ս կրնամ նա ընտանիքս լքել ու իմ կաշիս փրկության մասին մտածել... Զէ՝ որ տունին այր մարդը ես էի հիմա...:

— Ինչո՞ւ շպատասիանեցի մնացեր ես, շանցի՞ր ըսածներս:

— Լսեցի:

— Ուրեմն...

—



Ե ղ ե ո ն ը

(Նկարիչ՝ Բյուզանդ Կոճամանյան, Կաթիր)

— Ինձի նայե՛, զավա՛կս, զուն դպրոցը ազգային պատմություն, քաջ Վարդանի պատմությունը չե՞ս կարդացած. ան ալ, մյուս նախարարներն ալ երեսանց ուրացան իրենց կրոնն ու Աստվածը, բայց Ղեռնդ երեցը ներեց անոնց Անոնց ներող Աստվածը քեզ ալ հներեւ։ Կան պարագաներ, որ հարկը օրենքը կլուծեն։ Ամերիկա և Ռուսիա՝ ազբարներ ունիս, օր մը կազատիս ու կգտնես զանոնք... Ու անոնց կպատմես, թե թուրքերը ի՞նչ կարմիր ձյուն բերին մեր գլխում։

— Աղեկ, ենթադրենք, թե ես թրացա ու մնացի, բայց դո՞ւք, հարսներդ, պկտիկ-նե՞րը...

— Հոգ չէ, քու ներկայութենեղ օգուտ մը չկա մեզի համար, ընդհակառակը, վալոր, մյուս օր ժանդարմա մը կուգա ու կըսե. «Ինձի 5, 50, 100 ոսկի տուր, չենք տղագ կապանեմ»։ այն ատեն ես գլուխս ո՞ր քարին կրնամ զարնել... Լավ է, որ զուն գլխուդ ճարը նայիս։ Հարսները արդեն թույն ունին հետերնին. երբ տեսնեն, թե պատիվնուն պիտի զպին, կառնեն ու կազատին։

— Մա՛յր...

— Հիմա խոսք մտիկ ըրե, տղա՛ս, ու գնա գլխուդ ճարը գտիր։

Գտա միջոցը՝ առանց փնտոելու, ավելի ճիշտ՝ միջոցը եկավ ու գտավ զիս։ Մոտակա աղբյուրը լվացված պահուս, թուրք կին մը հավնեցավ ինձի ու առաջարկեց, որ մուսուլման ըլլամ, որ զիս որդագրե, իր տունը տանի, իր հետ «լա իլա իլլալլահ» ըսի ու եղա իսլամ։ Ի՞նչ ալ դյուրին էր...

Կինը, երբ զիս հսկող ոստիկանին տարավ, որդեգրում վավերացնելու համար, մարդուն խելքը կտրեց ու ինք վար դրավ զիս։

— Քաղաքարնակ այս տղան դաշտին մեջ աշխատանքի զնելով կապաննես, — ըսավ, — ես զայն հետս կտանիմ տուն ու դպրոց կղրկեմ։

Վազեցի մորս բով՝ ուրախ լուրը տալու և իր օրհնությունն առնելու վերջին անգամ։

Լացավ։ Բայց բացարեց, թե ուրախութենն է որ կուկա... Խրատներ տվավ ու գլուխս աֆերուն մեջ առած, սեղմեց կուրծքին ու սկսավ անհագորեն համրուրել։ Անհուն կորովով իր ձեռքերը կպտացներ դեմքիս, ճակտիս, այտերուս վրա, կարծես ջանալով անոնց չերմությունն ու կաղապարը անջնջելի կերպով գրոշմել իր աֆերուն մեջ, որ, երբ միտքն ու հիշողությունը զավաճանեին իրեն, ափը հիշե...

Վերջապես արցունքներս սրբեց ու մեղմո-
րեն հանդիմաննեց զիս:

— Ի՞նչ մատ մը տղու պես կուզաս...

— Հապա զուն ինչո՞ւ կուզաս:

— Ես... ես... եթե լալս շատ կտես-
նես ինձի, ա'լ չեմ լար... Բայց գուն իմ վրաս
մի՛ նայիր, ես մայր եմ: Ինտո՞ր մայր ըլլա-
լու եմ, որ լամ... Զէ՛ որ զուն վերջինն ու
հինգերորդ զավակս ես, որ կկորսցնեմ... Օ-
տարի զուռ կծեմ... Իմ խե՛ղճ, իմ ան-
րա՛խտ, իմ անու չշ ձագս... Կօրհնեմ քեզ բո-
լոր հոգիովս ու բոլո՞ր սրտովս: Թող տված
կաթս հալա՛լ ըլլա... Թող բոլոր նեղու-
թյուններդ ու տառապանքներդ ժամանակա-
վոր ըլլան, քար բռնես՝ ոսկի դառնա. փուշ
բռնես՝ վարդ... Հիշե՛ միշտ, թե ամեն ձմռան
գարուն մը կհաջրդե կրնկակով ու ամեն
ամպի ետև՝ արև մը կա... Հոգ տար ինքոյին-
քիդ, առողջությանդ Կարսոր է այդ: Խրատ
մըն ալ: Կրոնդ, ազգու ու հավատքդ շմոռ-
նա՞ս: Մեզի համար հոգ լինե՞ս... Մենք բան
մը կըլլանք... Աւեմը ինչ՝ մենք ալ ան... Ու
ա'լ մի լար: Եթե ես կուզամ, այդ իմ կամքես
անկախ է ինչա՛նկ մայր ըլլամ որ լամ...

Իր հոգնած, արևահար դեմքեն վար, կա-
պուտ ալքերեն ծորող արցունքը զուրի պես
կհոսեր:

— Զե՛մ երթար, մայրի՛կ, ձեզ մինակ
ձգած շե՛մ երթար, — պոռացի հանկարծ իր
վիզը իյնալով:

— Զէ՛ մանլս, մնալը ստուգգ մահ է, պետք
է երթաս: Եթե երթաս, մեռած պահուս, հուզ-
սը սրտիս մեջ պիտի մեռնիմ... Ա՛լ ամեն բան
հիշելու շափ մեծ ես ու խելահաս. վախ չու-
նիմ, թե հոգիով կկորսվիս... Կօրհնեմ քեզ,

թող տված կաթս հալա՛լ ըլլա... Դուն մեզ
համբուրե, մենք քեզ, ու ե՛լ, գնա՞ւ:

Երբ իր վերջին պատվերը կատարելի վերը
կերթայի, հասավ ետևս:

— Կեցիր անգամ մըն ալ համբուրեմ քեզ:
Վերջին անգամ մըն ալ... Իմին անբա՛խտ,
իմին օտարի զուռ ձգված ձագուկս, իմին...
իմին..., իմին... Ձա՞նս, չիկե՛րս, յավրո՞ւս....

**

Այդ թվականնեն մոտավորապես վեց ամիս
վերջ, քրդական գյուղի մը մեզ հանդիպեցա
Արտեմիս անունով մեկ ազգականուշիիս:
Անակնկալ այս հանդիպման պատճառած
հուզման ալիքն անցնելեն վերջ, հարցուցի,
թե գիտե՞», թե ի՞նչ եղան մերինները,
մայրս....

Մինչև էկին մեզի հետ էր, — ըսավ, —
հարսներն ու թոռները շուրջը հավաքած,
մինչև հոն եկավ մեզի հետ:

Լոեց:

— Վերջը, — հարցուցի սիրտս սեղմած:
— Ա՛լ լուր չունիմ, վերջեն լուր չունիմ:
— Ինձմե մի՛ պահեր, սուս մի՛ խոսիր:
— Իրավ կըսեմ, Արամ աղբար, լուր չու-
նիմ. եթե սուս եմ, թո՛ղ աշքս քոռնա, թո՛ղ
Աստված հոգիս առնե... Զէ՛, մի՛ նայիր ինձի
այդպիս, խաշ որ լուր չունիմ... Անպես իրա-
րանցում էր, այնպես սարսափելի...

Հասկցա: Լուր ուներ: Գիտեր:

Բայց չէր կրնար, չէր ուզեր արտասանել
ահավոր բառը, — Եփրա՛տը:

Եփրա՛տը, հարյուր հազարներու զրելեն
գերեզմանը....

